

9125

Առօրության բայց յեւկընենի, մասցիք.

ԿԵՆՈՆԾԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Խ.Հ.Մ. ՀԵՆՔԵԳՈՐԾՆԵՐԻ ԲԵՆՎՈՐԸ-
ԿԵՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ.

331.88(47)
4 - 89

Բ Ա Գ Ո Ւ
1924.

~~Պարբեսարնեւ բար յիւլյուսի, միացեւ.~~

285
28 4

331.88(47)
4.89

ԿԱՆՈՆԸԹՐՈՒԹՅՈՒՆ

Ս.Խ.Հ.Մ. ՀԵՆՔԸԳՈՐԾՈՒԵՐԻ ԲԵՆՎԱՐԱ-
ԿԵՆ ՄԻԱԽԹՅԱՆ.

— 100 —

Բ.Ա.Գ.Ա.հ.

1924



20958-212

Ս.Խ.Հ.Մ. ՀՅԵՆՔԵԳՈՐԾՎԵՐԻ ՄԻԱԼԻԹՅԱՆ
ԲՈԼՈԲ ԲԻՆԱՊՐԵԿԵՐԻՆ

Թանգարակին բնկեցներ.

Սաորե տպագրվոծ կանոնական թյությունը ընդունված է մեր մության 19. բգ համագումարում, որը տեղի ունեցավ այս տարվա (1924 թ.) ապրիլի 20—26:

Մինչև այդ ժամանակ գործում եր 1922 թվի մայուս ամսին ընդունված կանոնադրությունը:

Միության ամեն մի գիտակից անպամ, նոր կանոնադրությունը կառաջընթաց, իրավունք ունի հարց տալ, ինչով կզանազանվում նոր կանոնադրությունը նախընթացից:



Ազլիտ. 2639.

Зак. № 1070 — 2000 экз

2-я Гостин., Азполигр. ВСНХ. Баку.

Միության կանոնադրությունը
մի վավերաթուղթ ե, որը հաստա-
տում և միության որպես բանվո-
րական մասսայական մի կազմա-
կերպության նպատակները և ա-
նելիքները, ինչ տարրից ե բաղ-
կացած նաև և վոնց ե հիմնվում
միության կազմակերպությունը.

Մեր նոր կանոնադրությունը իր
այն մասում, ուր խոսվում է նրա
նպատակների և անելիքների մա-
սին, ոչնչով չի զանազանվում նա-
խընթաց կանոնադրությունից:

Հանքագործների միությունը,
առաջիկա նման, իրեն նպատակ է
դնում, բանվորների նյութական
դրության կատարյալ պաշտպա-
նությունը, մասնակցել մեր հան-
քագործության զարգացման ար-
տադրության մեջ, նպաստել իր

անդամների կուլտուրական և քա-
ղաքական զարգացման, ողնու-
թյան գոլ և աջակցել բանվոր-
դյուզացիական կառավարության
որդաններին, բանվորների լայն
խավերը մասնակից անել կոմմու-
նիստական շինարարության: Իր
ուժող գործի մեջ Միությունը
գիտ կցում ե, որ ինքը բանվորա-
կան գասակարգի մի մասնիկն է,
իսկ գասակարգի շահերը իր ամ-
բողջությամբ պիտի բարձր գասել
նրա մասնիկների շահերից: Միու-
թյան նոր կանոնադրությունը նո-
րից հաստատում ե, զոր մեր միու-
թյունը ամեն տեսակեաից պիտի
ոգնել և աջակցե ուրիշ յերկրնե-
րում գտնվող մեր եղբայր բան-
վոր հանքագործների հեղափոխա-
կան կովի զարգացման, զորտեղ

գեռ մինչև այժմ թագավորում է կապիտալը։ Ըսդհանուր առմամբ մեր միության նպատակներն ու խնդիրները չեն փոխվում։

Մեր կանոնագրությունը փոփոխված է միայն այն մասում, ուր խոսվում է, թե վոնց ե կազմակերպվում և գործում մեր Միությունը։ Վերջին յերկու տարվա ընթացքում մեր Միությունը ժողովել ե գործունեյության հարաւատ փորձ։ Գործնական կյանքը ցոյց է ապել թե ինչպես հիմնել լավագոյն կազմակերպություն, ինչպես ուժեղացնել այդ կազմակերտությունը և մոտեցնել նրան բանվորներին, ինչպես մասնակից անել Միության գործունեյության մեջ բանվորական լայն խավերը։ Բայց դրանից ոչ շատ առաջ վերջ-

նականապես կազմակերպվեցին մեր խորհրդային հանրապետությունները — մենք ունենք այժմ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն։ Մեր Միությունը այժմ ոչ միայն համառուսական է այլ և համամիութենական։ Բուսական հանքագործների հետ միասին մեր Միության մեջ յեն մտնում և Ազգբեջանի, Վրաստանի, Ուկրայնայի, Ղայաստանի և այլ հանքապետությունների հանքագործները։ Քննենք մաս առ մաս այն բոլոր կարեվոր փոփոխությունները և հավելումները, որոնք տեղի յեն ունեցել նոր կանոնագրության մեջ։

1. Միության մեջ մենք յեւ նրանից հեռացնելիու մասին։ Մեր

հին կանոնագրությամբ Միության մեջ կարելի եր մտնել համախրմաքան կարգով (коллективно), այսինքն արհեստակիցների ընդհանուր ժողովի վորոշամբ կամ թե անհատապես:

Նոր կանոնագրությունը թույլ ետալիս միմիայն անհատական ընդուռվիլը Միության մեջ:—Այդ նշանակում ե, որ բանվոր հանքագործը, որը իրավունք ունի Միության անդամ լինելու և ցանկանում ե անդամագրվել (իսկ ամեն մի գիտակից բանվոր պարտավոր ե Միության անդամ լինել) ինքը անձամբ հայտնում ե այդ մասին (գրագոր կամ բերանացի) տեղական բջիջին (հանքակոմին, գործկոմին) և ապա նա ընդունվում է Միության մեջ. իր անդամագրը-

վելու մասին անհատականապես հայտնելը այն նպատակն ունի, որպես զի զարկ տրվի բանվորի ակտիվ մամնակցության: Ոչ թե ուրիշն ե նրա փոխարեն վճիռ կայացնում, այլ նա ինքն ե իր կամքով Միության մեջ մտնում:

Փոփոխվում ե և Միությունից հեռացվելու կարգը: Առաջ, երբ կարիք կար մեկիս կամ միուսիս հեռացնելու (առետուրի, անպարկեցա վարմունքի, կարգապահության խախտման և այլն պատճառով) այդ կատարվում եր Միության տեղական բջիջի (հանքակոմի կամ գործկոմի) և շրջկոմի սիջոցով: Նոր կանոնագրությամբ սահմանվում ե, որ Միությունից հեռացնելը պիտի վճռվի այն ձեռնարկության բանվորների ընդհա-

նուր կամ պատղամավորների ժողովի վորոշմամբ, որաեղ այդ ընկերն աշխատում եւ Այս կարգը բացատրվում է Միությունից հեռացնելու փաստի լրջությամբ: Գիտակից բանվորի համար ավելի մեծ խայտառակություն չի կարող լինել, քան Միությունից, այսինքն պրոլետարական շրջանից, հեռացվելը: Այդպիսի վօրոշման համար անհրաժեշտ է բանվորական զանդքածի մասնակցությունը և ընդունի, վար այս կամ այն անհատը տեղ չ'պիտի ունենա Միության շարքերում: Վորովհետեւ Միությունից հեռացնելու գեղքում սխալմունքներ կարող են տեղի ունենալ, ուստի հեռացվողին իրավունք է արվում այդ վճռի դեմ բողոքել Միության բարձր որդան-

ներին. բողոքելու եղանակը սահմանված է կանոնադրության մեջ:

2. Միության որգանների կազմակերպության ձեվը: Այդ խընդրում կանոնադրությունը հաշվի եւ առել մեր Միության որդանների պարզության և նրանց բանվորական խավերին մոտեցնելու փորձը, որը կատարվել է վերջին երկու տարվա ընթացքում: Նոր կանոնադրությունը սահմանում է հետեւ վյալ կազմակերպությունը:

Միության ստորին որդանը հանքային, գործարանային կոմիտեն եւ Յեթե կոմիտեն ընդդրկում եւ շատ թվով բանվորներ, այն ժամանակ ստեղծում են ոժամակ որդաններ և լիազորներ (սոլո-հոմոչեններ) արհեստանոցներում (ցех):

Կոմիտեների զեկավարող որդաւնը Միության նահանգական կամ շրջանային բաժանմունքն է, որը ընտրվում է շրջանի Միության բոլոր անդամների պատգամավորների կոնֆերանսում կամ համագումարում (Յ.Յ.Յ.):

Միության բարձրագոյն որդանը, շրջոմների (բայկոմների) և հանքակոմների տշխատանքներին ուղղություն տվող Միության կենտրոնական կոմիտեն է, որը ընտրվում է Ս.Խ.Հ. Միության բոլոր հանքագործների համագումարում:

Այսպիսով Միության գերազոյն որդանը համամիութենական համագումարն է, որը տեղի է ունենում 2 տարին մի անգամ:

Այդ համագումարի համար բոլոր շրջաններն ընտրում են պատ-

գաճափորներ—ամեն մի հազար անդամից մեկ պատգամավոր. հինգ կանոնադրությամբ 2 հազար հոգին մի պատգամավոր եր ընտրում: Այժմ համամիութենական համագումարում կլինեն ավելի մեծ թվով պատգամավորներ քան թե առաջ: Զնայած դժվարություններին և մեծ ծախսերին, ներկայացուցչության այդ ընդլայնումը ընդունվել է կատարյալ գիտակցորեն, որպես զի ավելի մեծ թվով պատգամավորներ մասնակցեն Միության վերաբերյալ կարեգոր հարցերի վճռին.

3. Միության ստորին-սկզբնական բջիջի (հանքիումի, գործկումի եւ այլն) մասին:

Միության տշխատանքի ուշադրության կենտրոնը հանկըռմն է:

Զե որ բանվորների կարիքների կարիքների անմիջական հոգատարը հանքկոմի ե, ուստի նոր կանոնադրությունը մացնում և միշտ փոփոխություններ և հավելումներ այն մասում, ուր ցուցադրվում ե, թե ինչպես են կազմակերպվում և աշխատում սկզբնական որդանները:

Նոր կանոնադրությունը ընդգծում և հանքկոմի պատասխանատվությունը ընդհանուր և պատգամագորական ժողովների առաջի նրա հաշվետվության պարտավորեցիչ լինելը:

Որպես զի ամեն մի բանվոր զգա իր պատասխանատու լինելը հանքկոմի աշխատանքի համար սահմանվում ե, վոր այն ձեռնարկություններում, ուր գործում

են մինչև հազար բանվորներ, հանքկոմը ընտրվում և բոլոր բանվորների ընդհանուր ժողովում:

Միայն մեծ ձեռնարկություններում (1000-ից ավելի բանվորներ), վորակեղնդհանուր ժողովում ընտրություն անելու տեխնիկական հարմարություն չկա, ընտրությունները տեղի են ունենալու պատգամավորների ժողովում:

Այստեղ, որտեղ հանքկոմը միավորում և մի քանի մեծ թվով բանվորներ ունեցող ձեռնարկություններ, ստեղծվում են ամեն մի հիմնարկության մեջ ոժանդակ որդաններ՝ տեղական հանքկոմներ: Հին կանոնադրությամբ տեղական հանքկոմների առջև կոմիտեն գոյություն ուներ միանձնեա իրավասու (уполномоченныи): Այդ

իրավասուների փոխարեն տեղական հանքկոմիներ ստեղծելը այն ոգուան ունի, որ ընտրված յեն և արհեստակցական դուժի յեն կանչվում ոչ թե մեկ մարդ (իրավասու) այլ մի քանի (7—9) առաջավոր բանվորներ և միենոյն ժամանակ տեղական հանքկոմի վճիռները ավելի աղղեցիկ են, վորովնետե տեղ. հանքկոմի անդամները ավելի սերտ են կազմաձբանվորների հետ, ամեն որ գտնվելով նրանց շրջանում—հանքում կամ դորձարանում:

Մի շաբթ փոփոխություններ են մտցրված կանոնադրության մեջ, մասնավորսպես ֆինանսական մասում, և այդ վորոշումների հյությունը կայանում է նրանում, վոր Միության վճարներից ավելի մեծ

գումար և թողնվում տեղերում, տեղական աշխատանքի զարգացման համար: Դրա համար, ըստ կանոնադրության, փոխադարձ օդնության և կուլտուրական աշխատանքի համար առանձին գումարներ (ՓՕԱԾ) են հատկացվում:

Ըստհանուր առմամբ կանոնադրության մեջ տեղի ունեցած ըուլոր փոփոխությունների ու համելումների հիմնական նպատակն ե ուժեղացնել մասսայական աշխատանքները տեղերում, առավել մեծ թվով բանվորներ, Միության անգամներ գրավել գեպի Միության ակտիվ աշխատանքները, բարելավել Միության բարձրագոյն որդգանների աշխատանքների ղեկավարությունը:

Վորպես զի Միության ամեն մի

անդամ բանվորը սերտ կերպով
 մոռենա Միության՝ հարկավոր և
 վոր նա գիտենա, թե ի՞նչպես ե
 կազմակերպված մեր Միությունը
 և ի՞նչպես ե նա ապրում: Միու-
 թյան ոմեն մի անդամ պիտի գի-
 տենա, թե ի՞նչ պիտի անի և ի՞նչ-
 պես պիտի վարվի Միության ա-
 մեն մի որդան. Սյդ բոլորի հա-
 մար հարկավոր ե, վոր Միության
 ամեն մի անդամ կարդա մեր կա-
 նոնագրությունը, զիտենա այն,
 ինչ գրել և հաստատել ե մեր
 Միության գերազոյն որդանը—
 Ս.Խ.Հ.Մ. հանքակործների IV-րդ
 համագումարը:

Կենդրոնական Կոմիտեն հույս
 ունի, որ միության ամեն մի ան-
 դամ, ում ձեռքը կ'ընկնի մեր նոր
 կանոնագրությունը ոչ միայն ին-

քը ուրախությամբ կ'կտրդա մեր
 կանոնագրությունը այլ և խոր-
 հուրդ կը տա իր ընկերներին
 նոյն անել, կ'պատմե կանոնա-
 գրության բովանդակությունը այն
 անգրագետ ընկերներին, որոնք
 կարդալ չեն կարող: Այդպես պի-
 տի վարվի Միության ամեն մի
 գիտակից անդամ—զրանով նա
 կ'ոգնե. իր պրոլետարական կազ-
 մակերպությանը:

Ս.Խ.Հ.Մ. Հանքագործների
 Միության Կենտրոնական
 Կոմիտեի Պրեզիդիում,

Ներկա կանոնադրությունը ըն-
դունված է Ս.Խ.Հ.Մ. Հանքագործ-
ների Միության IV համագումա-
րի ապրիլի 24-ին 1924 թ. նիս-
տում:

Հաստատված է Հ.Կ.Խ.Ա.Մ. (ՎՀԸԸ)
21 մայիսի 1924 թ.

1. Նպատակներ եւ անելիքներ.

Հանքագործների Միությունը,
միավորելով Ս.Խ.Հ.Մ. սահմաննե-
րում բոլոր բանվորներին ու ծա-
ռայողներին, փորոնք աշխատում են
հանքային արդյունաբերության
մեջ և Հ.Կ.Խ.Ա.Մ.-ի (ՎՀԸԸ) մի-
ջոցով մանելով Սրբաւակցական
Միությունների Կարմիր ինտեր-
նացիոնալի մեջ, իրագործում ե
նետելյալնպատակները և ձգտում-
ները:

1. Աջակցում ե հեղափոխական
դասակարգային կովի զարգացմա-
նը, համաշխարհային մասշտաբով,
կապիտալի իշխանությունը տա-
պալելու և պրոլետարիատի դիկ-
տատուրայի միջոցով կոմմունիզմի
իրագործման համար:

2. Կազմակերպչական կազ ե
ստեղծում ուրիշ յերկիրների հա-
մանման Միությունների հետ, մաս-
նակցելով հանքագործների միջուղ-
գային Միությունների կազմակեր-
պության աշխատանքին, այդ Միու-
թյունների միջազգային համագու-
մարներում, ամեն տեղ պաշտպա-
նելով և անց կացնելով իր հեղա-
փոխական դասակարգային կովի
տեսակետը (լլատֆօրմա):

3. Կոմմունիստական շինարա-
րության ներկա զարգացման ըլլ-

Հանում հանքագործների Միության հերթական անելիքները հետևյալներն են. ա) պաշտպանել ամեն միջոցներով հանքագործ բանվորների և ծառայողների նյութական և իրավական շահերը, նըրանց նյութական բարորությունը, աշխատանքի և կենցաղի պայմանները բարելավելու նպատակով. բ) աջակցել արդյունաբերության կազմակերպությանը և ամրապնդանը, մասնակցելով ծրագրող և կարգավորող որգաններում, արնեսորդանների հետ միասին մշակել արտյունաբերական ծրագիրներ և ուրուագծեր, մասնակցել դրամական, սպառողական, կապալով տալու (հօնցըսու) հարցերի խորհրդակցություններին և այլն. դ) Խորհրդային իշխանության որ-

գանների հետ միասին աշխատել Միության անդամներին առանձին արտոնություններ տալու նոյնավես և բանվորների սոցիալական ապահովագրության բոլոր ձեվերը կյանքի մեջ մտցնելու նպատակով. դ) կոռպերացիայի կազմակերպումըն և նորա զարգացման աջակցելը. ե) կազմակերպել փոխադարձոգնություն Միության կարիքավոր և ունգործ անդամների համար. դ) կազմակերպել Միության անդամների համար իրավաբանական ոգնություն. ը) մացնել Միության անդամների մեջ հաստատուն աշխատավորական, հեղափոխական դիսցիպլինա, բարձրացնել աշխատավորականությունը, դասախարակել կազմակերպչական սովորություններ, բանվորական

լայն խավերը մտցնել կումունիւսական շինարարության դործի մեջ:

4. Միությունը ակախվ աջակցություն և ցույց տալիս Բանվորացուղացիական Խմբանության բոլոր կազմակերպություններին, որպես պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքական որգանների:

5. Մ.Խ.Հ.Մ. հանքագործների Միությունը բացասում և Միության նեղ արհեստակցական, կրոնական, ազգայնական և ֆեղերական կազմակերպչական ձեռքը և միավորում է հանքային արդյունաբերության բոլոր բանվորներին և ծառայողներին, անկախ նրանց համոզմունքներից, ազգություններից և կրօնական հայացքներից, միակ Միության մեջ ար-

դյունագործական հասկանիշով
Մ.Խ.Հ.Մ. սահմաններում:

2. Միության կազմը:

6. Հանքագործների Միության կազմի մեջ կարող յեն մտել բոլոր այն անձինք, վորոնք հպատակվում յեն այս կանոնագրության, հանքային արդյունաբերության ձեռնաբերություններում վարձով աշխատում յեն, անկախ իրենց կատարելիք աշխատանքների և հիմնարկության բնավորության (մասնագոր կամ պետական), նոյնպես յեզ ձեռնաբերություններում գոյություն ունեցող արհեստագիտական ուսումնաբանների աշակերտները (ֆաճարյութ):

7. Միության անդամ լինել չեն կարող, ա) տնայնագործները (եւ-

տարք), թ) համարվեսաւավորների ընկերությունների (արտել) անդամները, գ) մասնավոր սեփականատերերը, կապալառուները, ձեռնարկությունների ոգուաներում մասնակից բաժնետերերը, դ) մասնավոր ձեռնարկություններում այն ծառայողները, վորոնք բանվոր վարձելու և արձակելու իրավունք ունեն և ե) աշխատանքի ընդունակությունը ամբողջովին կորցրած անձինք.

Բացի գրանից Միության անդամ չեն կարող լինել ըոլոր այն անձինք, վորոնք խորհուրդային սահմանագրության համաձայն չեն ոգտվում ընտրողական իրավունքով, այսինքն.

ա) կրօնական ծիստկատարության ծառայողները,

բ) նախկին վոստիկանության, ժանդարմների տռանձին կորպուսի լեկ սխրանկայի ակադիվ ծառայողները և ազենաները,

գ) Շահամոլ և քրեական հանցանքի համար արտասավորված յեկդատաստանական վճռով իրավունքներից զրկվածները,

դ) այն անձինք, որոնք դիմում յեն վարձու աշխատանքի ոգուտքաղելու նախատակով կամ առանց աշխատանքի եկամուտներով ապրողները և այլն.

Ծանոթություն. կ. 7 ում հիշված անձնավորությունները կարող են ընդունվել Միության անդամ միայն բացառիկ գեպքերում այն ել ձեռնարկության բանվորների ընդհանուր ժողովի վորոշամբ ստորին բջիջի (հանք-

կոմի) հիմնավորված յեղբակացությամբ և Միության բայկոմի հաստատմամբ։ Այդպիսի անձանց ամբողջ խմբով Միության անդամադրվելը՝ տեղի կարող է ունենալ միայն բացառիկ գեղքերում, այն ել միայն կենարոնական կոմիտեի թույլտվությամբ։

8. Միության անդամուղրվելը կամավոր ե։ Անդամադրվել ցանկացողը հայտնում ե գրա մասին հանքկոմին կամ գործկորին, յեթե մինչեվ անդամ վորոշում լինի կացած ընդհանուր ժողովում խըմբական անդամադրվելու մասին։

9. Միության մեջ ընդունելու հարցը վճռում ե հանքկոմը (գործկոմը), յեթե Միության որգանների, ընդհանուր ժողովի կամ

առանձին անձանց կողմից հիմնավորված ըողոք — չի եղել։

Միության անդամ հաստատվելուց հետոյ, ընդունվողը վճարում է սկզբնական տուրքը և ստանում է անդամադրվելու յկը։

10. Միության անդամադրվելում երժման շարժառիթները պիտի համապատասխանեն ներկա կանոնադրության § 7, .22 յեկ 27։ Հանքկոմի (գործկոմի) ընդունելության վերաբերյալ վորոշումների մասին կորելի ե բողոքել Միության բարձր որգաններին։

11. Միության վորեկե անդամ, յեթե ուղարկվում ե զանազան կազմակերպություններ, իբրև Միության ներկայացուցիչ մշտական աշխատանքների համար, նույնպես յեկ խորհուրդային, կուսակցական

և ուրիշ հիմնարկություններ իրրե
բնորյալ, ամբողջ իր լիազորու-
թյան ժամանակամիջոցում մնում
է Միության անդամ:

12. Ուրիշ արդյունաբերական
միությունների անդամները, վա-
րոնք փոխվել են հանք «յին հիմ-
նարկություններ», մտնում են
Միության մեջ հին «նդամների
իրավունքներով, առանց ոկզրնա-
կան տուրք վճարելու և հաշվի
առնելով արհեստակցական ժամա-
նակաշրջանը (ՇՏԱՀ), միայն այն
անհրաժեշտ պայմանով, վոր զբա
մասին հայտնվի այն միությանը,
որի անդամ են եղել ունչ այն
ձեռնարկության տեղափոխվելը,
որը միավորվում է հանքագործ-
ների Միությում:

Ծանոթություն: Հանքագործ-
ների Միության անդամներին
անպայման արգելվում է միա-
ժամանակ անդամ լինել մի ու-
րիշ միության մեջ:

13. Կարմիր զորքի մեջ կանչ-
վածները շարունակում են մնալ
Միության անդամ բոլոր ժամա-
նակ, քանի որ նրանք զորքի շար-
քերութիւն են և ազատվում են ան-
դամավճար տալուց:

14. Միության անդամը, որը
ժամանակավորապես կորցնում է
աշխատելու ընդունակությունը
կամ թե աշխատավուրկ է լինում
(շտատի կրծատում, հիմնարկու-
թյան փակվելը և այլն) նույնպես
և բանֆակների, բարձրագոյն դըպ-
րոցների և ուրիշ ուսումնարաննե-
րի ուսանողները, վորոնք մինչև

ուսումնարան մտնելը Միության անդամ յեն յեղել, ազատվում յեն անդամագնար տալուց, բայց միայն այն պայմանով, վոր ժամանակին ցուցակագրվեն Միության մեջ և համապատասխան հիմնարկություններում (աշխատանքի Բիբ-ժա, ապահովագրական կասսա և այլն):

15. Ժամանակաշրջանային (сезонные) բանվորները, վորոնք աշխատում են հանքագործական արդյունաբերության զանազան ճյուղերու մ, (աղահանք, տորֆահանք) ընդունվում են Միության մեջ մշտական բանվորների հետ ընդհանուր հիմունքներով:

16. Ժամանակաշրջանային բանվորները Միության անդամների իրավունքներով ոգավում են և

կատարում են նրանց պարտականությունները միայն աշխատանքի արդյունաբերության մեջ եղած ժամանակաշրջանում:

Ծանոթություն: Ժամանակաշրջանային բանվորների անդամագրոյիկի վրա նշան ե անվում «ՀԵԶՈՒԹՅԱՅ»:

17. Ժամանակաշրջանային բանվորները — Միության անդամները պահպանում են իրանց Միության ստագը, յեթե նրանք հանքագործական արդյունաբերության շրջանները (сезон) բաց չեն թողնում: — Շրջանը բաց թողնելու դեպքում Միության անդամը համարվում է ինքնաբերաբար (автоматически) հեռացված Միության շարքերից:

18. Ժամանակաշրջանային բան-



վորների կարիքների հոգասարությունը կատարվում է Միության կայուն որդանների միջացով այդ բանվորների աշխատանքի տեղերում և ատրվում է Կենտրոնական Կոմիտեի հրատարակած հատուկ հրահանգի հիման վրա:

3) Միության անդամների իրավունքները եւ պարտականությունները:

19. Նյութական և իրավական կարիքի գեպքում Միության բոլոր անդամներն ոգտվում են Միության բաղմագիմի ոժանդակությամբ ու պաշտպանությամբ և կարող են թե ընտրել և թե ընտրվել Միության բոլոր պատասխանառներում.

20. Միության ամեն մի ան-

դամ բոլոր աեղական ընդհանուր ժողովներում Միության գործունեության վերաբերյալ բոլոր հարցերում վճռական ձայնի իրավունք ունի, միենոյն ժամանակ իրավունք ունի Միության բոլոր որդաններում առաջարկներ անել և հարց բարձրացնել թե Միության և թե նրա պաշտօնյաների գործունեյության վերաբերյալ:

21. Միության ամեն մի անդամ պարտավոր է՝ ճշտորեն և ժամանակին վճարել անդամավճարը, նպաստել Միության որդանների բոլոր վճիռները և փորոշումները կյանքի մեջ մտցնելուն, հպատակվել Միության պրոլետարական դիսցիպլինալի բոլոր պահանջներին, կատարել ներքին կարգավահության բոլոր կանոնները, հավա-

քտկան պալմանազրի բոլոր կետերը, և բոլոր վեճերի և թյուրիմացությունների ժամանակ դիմել Միության տեղական բջիջին։ Միության անդամների անպայման պարտականությունն են հպատակվել այն բոլոր պահանջներին և կոչերին, վորոնք բղխում են Միության որդանների կողմից, և վերաբերում են Միության կյանքի բոլոր հարցերին։

4. Անդամերի Միուրյունից հեռացվելու (ոչույշելու) կարգը։

22. Միության կանոնադրությունը խախտող անդամը, Միության որդանների որոշումները չըկատարող կամ թե այդ որոշումների կյանքի մեջ անցկացնելուն խանդարող՝ հեռացվում է Միու-

թյունից, ևն թարկվելով զրանից բղխող բոլոր հետեւանքներին։

23. Միությունից հեռացվելը կատարվում է տվյալ ձեռնարկության (կամ հիմնարկություն) Միության անդամների ընդհանուր կոմիտադամավորների ժողովում Հանքկոմի (Գործկոմի) առաջարկությամբ, յեթե եռացվելու համար ձայն են տվել ժողովում ներկա եղանքների վոչ պակաս քան յերկու յերրորդ մասը, և հաստատվում է Շայկոմի (Շրջկոմի, Նահանգական կամ Հանքապետական Միության բաժանմունքի) կողմից։

24. Միությունից հեռացվելու մասին կյայցած վորոշումների դեմ՝ շահագողոված անձերը՝ կարող են գանգատ տալ Միության

բարձրագոյն կազմակերպություններին:

25. Միությունից հեռացվելը կարող է տեղի ունենալ ժամանակավոր և առանց ժամանակը մատնանշելու: Առանց ժամանակը մատնանշելու հեռացրվածները կարող են նորից ընդունվել միայն ընդհանուր կամ պատգամավորների ժողովի հատուկ վորոշմամբ և հանքկոմի առաջարկությումբ և Բայկոմի (Շըջկոմի, Նահանգկոմի) հաստատությամբ, սակայն վոչ շուտ քան Միությունից հեռացնելուց 6 ամիս հետո:

Ծանրություն: Յեթե Միությունից հեռացնվելը, առանց ժամանակը մատնանշելու, հաստատված և Միության բարձրագոյն կազմակերպությունների

կողմից գանգատ ներկայացնելուց հետո, այդ դեպքում հետքնդունելը նոյնպես պիտի հաստատվի այդ կազմակերպություններից:

26. Միությունից հեռացրվածները հետ ընդունվելու գեպքում նորից վճարում են սկզբնական վճարը: Միության նախկին անդամաշրջանը հաշվի չի առնվում:

27. Խնդնաբերաբար (автоматический) հանքագործների Միության շարքերից գուրս են գալիս հետեւյալ անդամները. ա) վորոնք անցնում են այնպիսի ձեռնարկության մեջ, վորը մտնում է ուղիղ Միության մեջ. բ) ամբողջովին աշխատելու ընդունակությունը կորցրածները այն մոմենտից, յերբ նրանք անցնում են սոցիալական

ապահովագրության կամ որ և և
մեկի խնամքին (այցաւենու). գ)
Յերեք ամիս անընդհատ, առանց
հարգելի պատճառի անդամագնար
չափողը. գ) բոլոր այն անձինք,
վորոնք այս կանոնադրության
§ 7.ի դորությամբ անդամ լինել
չեն կարող:

Ծանոթություն. Անդամագնար
չտալու պատճառի հարգելի լի-
նելը (գ. կետի համաձայն) որո-
շում ե Միության տեղական
որգանը. այդ կետի հիման վրա
հեռացվածները կարող են նո-
րից ընդունվել միայն պարագը
և սկզբնական (ներածական) վր-
ճարը տալուց հետո. Այդպիսով
նորից ընդունվածը հաշվում ե
Միության անդամ յերկուորդ
անդամ մտնելու որից, առանց

հին անդամաշըջանը հաշվի առ-
նելու:

5. Միության կազմությունը:

Ըստ ՀՀ Սահմանադրության՝

28. Միության բոլոր որգաննե-
րու, բարձրից մինչև ստորինը, թե
իրանց կազմով և թե գործունեու-
թյան ուղղագծով, հիմնված են
ընտրական սկզբունքի վրա, որն
իրականացնվում է Միության հա-
մագումարի և բարձր որգանների
որշումներով:

29. Միության բարձրագոյն որ-
գանների կարգադրուդրություն-
ները չկատարելու դեպքում տե-
ղական որգանները կարող են ա-
վելի բարձր կանոնած որգանների
կողմից լուծված համարվել: Նոր
կազմ ընտրելու հումար 2 ամսվա

ընթացքում պիտի նշանակվի արտակարգ համագումար կամ ընդհանուր ժողով:

Ծանոթություն. Հուծման դեպքում ստեղծվում ե ժամանակավոր կազմակերպչական բյուրո բարձր կանգնած որդանիցուցմունքով, և այդ բյուրոն, փխարինելով Միության լուծված ու գանին, նախապատրաստում ե համագումարի հրավիրելու գործը, որի ժամանակ ամփոփ զեկուցում պիտի տալուծման պատճառների մասին:

I. ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ.

30. հանքագործների Միության բարձրագոյն որդանը համարվում է Միության համագումարը։ Հերթական համագումարը տեղի է

ունենում յերկու տարին մի անգամ։

Ծանոթություն։ Արտակարգ համագումարներ հրավիրվում են Կենտրոնական Կոմիտեի պլենումի, Միության կոնֆերանսի որոշմամբ կամ վերաքննիչ հանձնաժողովի պահանջով, նոյնպես և աեղական որդանների պահանջով, յեթե նըրանց անդամների քանակությունը Միության բոլոր անդամների թվի կեսից ավելի է։

31. Միության համագումարը համարվում է իրավական յեթե ներկա գտնվող պատգամավորները ներկայացնում են Միության բոլոր անդամների ոչ պակաս քան երկու-երրորդը։

32. Միության համագումարը

կազմվում ե բայոնական, նահանգային շրջանային կամ հանրապետական համագումարներում (կոնֆերանսում) ընտրված ներկայացուցիչներից։ Միության ամեն մի 1000 անդամը ընտրում է մի ներկայացուցիչ։ Այն բայոնները, վորոնց անդամների թիվը՝ 500-ից մինչև 1000 ե, ընտրում են մեկ ներկայացուցիչ։ Այն բայոնները, վորոնց անդամների թիվը մինչեւ 500 ե, ընտրում են մեկ ներկայացուցիչ խորհրդակցական ձայնով։

Ծանոթություն 1: Ընտրողական մանրամասն կանոնները մշակում ե Կենտրոնական Կոմիտեն առանձին հրահանգով։
Ծանոթություն 2: Կենտրոնական Կոմիտեի և վերաքննիչ

հանձնաժողովի անդամները, յեթե նրանք մասնակցում են համագումարին ոչ ինչպես ընտրը ված, ոգտվում են խորհրդակցական ձայնով։

33. Միության Համագումարը.
1. լուսմ ե Կենտրոնական Կոմիտեի գործունեյության մտաին գե. կուցումը, վորոշում ե նրա հետագա գործունեյության ընդհանուր բնույթը և սահմանում է Միության կազմակերպչական շինուարության սկզբունքները։ 2) քընուում և վորոշում է Միության աշխատանքներին վերաբերյալ զանազան ճյուղերի խնդիրները (աշխատանքի պաշտպանություն, կուլտուրական, սակագնի (タリフィヤն) և այլն). 3) լուսմ ե անհասսական և պետական ուրիշ որդանների գե-

կուցումները և համապատասխան վորոշում եւ կայացնում. 4) ընտրում եւ չանքագործների Միության Միջազգային Համագումարի համար պատգամավորներ. 5) ընտրում եւ Միության Կենտրոնական կոմիտե և վերաբնիչ հանձնաժողով:

II. ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՆՔԵՐԱՆԱ

34. Համագումարի մեջ եղած ժամանակաշրջանում կենտրոնական կոմիտեի վորոշմամբ կարող է տեղի ունենալ Միության կոնֆերանս Կ. Կ.-ի սահմանաձ նորմայով:

35. Միության կոնֆերանսը. ա) ըսում եւ Կ.Կ. և Միության ուրիշ որդանների զեկուցումները. բ) մատնանշում եւ Կ.Կ. հետագա դոր-

ծունեյության ուղիները և անելիքները. գ) Կ.Կ.-ի կամ վերաբըննիչ հանձնաժողովի անդամներից մեկն ու մեկի հեռանալու դեպքում նրանց փոխանորդների լրացցցիչ ընտրություն ե կայացնում:

36. Կոնֆերանսի վորոշումները հաստատում ե Կենտրոնական կոմիտեն.

III. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.

(ա) ՊԼԵՆԱՐ:

37. Միության համագումարի կողմից ընդունված վորոշումների հիման վրա Միության աշխատանքը իր ամբողջ չափով առաջ տանելու համար ընտրվում է Կենտրոնական կոմիտե, վորը ներկայանում ե վորպես միության բարձրագոյն

զեկավարող որդան համագումար-ների մեջ եղած ժամանակաշրր-ջանում, Կ.Կ. անդամների և նրանց թեկնածուների թիվը ամեն ան-դաժ վորոշում ե Միության հա-մագումարը:

Ծանոթություն: Թեկնածու-ները փոխարինում են Կ.Կ. հե-ռացած անդամներին Կ.Կ. վո-րոշմամբ:

38. Կ.Կ-ն իր ամբողջ գործու-նեության համար պատասխանա-տու ե Միության Համագումարի և Համամիութենական Արհեստակ-ցական Միությունների Կենտրո-նական Խորհրդի (ՎՊԸԸ) առաջ:

39. Կ.Կ-ի պլենումը ժողովակում ե ոչ պակաս քան 4 ամիսը մի անգամ:

40. Կ.Կ-ի պլենումը. ա) լուսմ և նախագահության (президиум) և նրա որդանների գործունեյու-թյան հաշվետվությունը և մատ-նանիշում ե նրանց հետագա գոր-ծունեյության պլանը. բ) լուսմ և անտեսական որգանների և նրանց մեջ աշխատող իր ներկայացու-ցիչների գեկուցումները և համա-պատասխան վորոշումներ և կայա-ցնում, գ) վորոշում ե Միության Համագումարի և Կոնֆերանսի գու-մարելու ժամանակը և նրանց քննության ենթարկելիք հարցերը, դ) ընարում ե Կ.Կ-ի նախագա-հությունը (президиум):

41. Բացի հերթական պլենու-մից կարող են կանչվել և Կ.Կ-ի ընդարձակ պլենում, որին նրա-վիրակում են Միության տեղական

առանձին որդանների ներկայաց-
ցուցիչներ:

42. Տեղական որդանների ներ-
կայացուցիչները և Վերաքննիչ
Հանձնաժողովի ոնդամները, բացի
Կ.Կ.-ի անդամներից, ընդարձակ
պլենումի նիստերին ոգտվում են
խորհրդակցական ձայնի իրավուն-
քով; Կ.Կ.-ի անդամների թեկնա-
ծուները ոգտվում են հերթական
կամ ընդարձակ պլենումի նիստե-
րին վճռողական ձայնով միայն
այն գեղքում, յեթե Կ.Կ.-ի ան-
դամների ամբողջ կազմը ներկաչե:

Բ. Պրեզիդիում (նախագահություն).

43. Միության ընթացիկ գոր-
ծերն առաջ տանելու և Միության
գործունեյությունը ղեկավարելու
համար Կ.Կ.-ի պլենումը ընտրում

ե իր միջից Պրեզիդիում 5-7 հո-
գուց բաղկացած:

44. Պրեզիդիումը, վորպես Կ.Կ.-ի
գործադիր մարմին՝ ա) կատարում
ե այն բոլոր առորյա աշխատանք-
ները, վորոնք բղխում են Միու-
թյան Համագումարի, Կոնֆերանսի
և Պլենումի վորոշումներից, բ)
միավորում և ներդաշնակում ե
բոլոր բաժինների և սեկցիաների
աշխատանքները, գ) ղեկավարում
ե, ուղղություն ե տալիս և վերա-
հակում ե Միության բոլոր առ-
դական բաժինների աշխատանք-
ները, դ) արհեստակցական ակտիվ
աշխատագնների անհրաժեշտ փոխա-
դրություններ ե կատարում, ե)
Կ.Կ.-ի կողմից ներկայացուցիչ և
հանդիսանում անհեստավարչական,
պետական և այլ որդանների հան-

դեպ, զ) զանազան հարցերի մասին խորհրդակցությունն է հրավիրում՝ որինակ կազմակերպչական, տարիփային, աշխատանքի պաշտպանության, կուլտուրական և այլն, ը) վավերացնում և վերջ ետալիս տեղերում ծագած կոնֆլիկտները և գործադուլները և դեկավարում են նրանց ընթացքը, թ) միջոցներ են փնտրում Միության անդամների տնտեսական և իրավական գրությունը բարելավելու համար, ժ) Միության մեջ կենտրոնացած ֆոնդերը կարգավորում և մասնագրում են ի) Միության անունից հավաքական տարիփային և ուրիշ պայմանագիրներ և համաձայնություններ և կնքում, լ) անորինում են ֆինանսները և գումարը ու նրանց հաշիվ-

ներն են պահում, իս) ընթացիկ հաշիվ են բանում պետական և ուրիշ վարկային հիմնարկությունների մեջ և կարգ գրություններ են անում, ծ) Միության անունից հավատարմաթուղթ և լիազորություն են տալիս բոլոր դատարաններում և հիմնարկություններում գատական և ուրիշ գործեր առաջ տանելու համար:

գ) Կ. Կ-ի լիազոր.

45. Այս շրջաններում և հաստրակալեալություններում, որոնք մասնում են Ս. Խ. Հ. Մ. կազմի մեջ և, գարգացած հանքային արդյունաբերություն ունին, սակայն չունեն ընտրված Միության որդգաններ շրջանի կամ հաստրակալության չափով, Կ. Կ-ի կող-

մից կարող են նշանակվել կիազոր-ներ, վորպես զի կարելի լինի այդ բաժինների աշխատանքները համաձայնեցնել Միության բարձրագոյն որդանների որոշումների և կարգադրությունների հետ, Կ.Կ.-ի և տեղական միջմիութենական որդանների հետ կապը կարգավորելու ամրացնել և ներկայացուցիչ հանդիսանալ տնտեսա-վարչական որդաններում։ Այդ Լիազորները գործում են Կ.Կ.-ի հրահանգներով։

IV. Միության Երշանային, Հանրապետական, Նահանգական և Բարենական բաժանումներ։

46. **Ա. Խ. Հ. Մ.** հանքագործների Միությունը բաժանվում է շրջանային և հանրապետական (Սեղմ)

մեջ մտած հանրապետությունների յերկրում), նահանգական և բայցնական բաժանմունքների, վորոնք ղեկավարում են Միության կազմակերպությունների գործունեյությունը իրանց միավորումների սահմաններում։

Ծանօթություն։ Առանձին հանրապետությունների մեջ հանրապետական բաժանմունք ստեղծելը կատարվում է Կենտրոնական Կոմիտեյի վորոշմամբ։

Ա. ՀԱՅԱԳՈՒՄԱՐ.

47. Միության տեղական բարձրագոյն որդանը (շրջանի, հանրապետության, նահանգի և այլն) բայցնական (շրջանային, հանրապետական, նահանգական և այլն) համագումարն է, որը գումարվում

ե ոչ պակաս քան տարին մի անգամ:

Ծանոթություն: Արտակարգ
համագումարներ կարող են զու-
մարվել Կ. Կ.-ի, բայոնական Կ.-ի,
միջմիութենական կազմակեր-
պության (Կ. Կ.-ի համաձայնու-
թյամբ), և Վերաքննիչ Հանձնա-
ժողովի վորոշմամբ կամ նոյն
բայոնի Միության անդամների
ոչ պակաս քան կեսի պահան-
ջով:

48. Բայոնական (շրջանային,
հանրապետական, նահանգական)
համագումարի ընարությունները
տեղի են ունենաւմ հանքելումների
(գործկոմների) կոնֆերանսում կամ
թե պատգամավորների ժողովում,
վորի չափը (հօրմա) վորոշում ե
բայոնական կոմիտեն (շրջկոմը,

հանրապետական կենտրոնական
վարչությունը, Միության նահան-
գական բաժանմունքը):

Ծանոթություն: Բայկոմի (շրջ-
կոմի և այլն) և վերասառակից
հանձնաժողովի այն անդամները,
վորոնք իրեն պատգամավորները
ընարված չեն կոնֆերանսներում
կամ պատգամավորական ժողով-
ներում, բայոնական համագու-
մարներում ողտվում են խոր-
հրդակցական ձայնով.

49. Բայոնական (Նրջ. Հանրապ-
եան, և այլն) համակումաբը՝ ա
լսում և հաստատում ե Միության
կոմիտեի (Վարչության), վերա-
սառակից հանձնաժողովի և կոմի-
տեի զանազան հիմնարկություն-
ներում և ձեռնարկություններում
աշխատող ներկայացուցիչների

հաշվետվությունը, բ) ուրվագծում
ե նրանց հետազա անելիքների ծը-
րագիրը և կարեվոր ձեռնարկու-
թյունները կ. կ.-ի ցուցումների
